Արդարադատության ակադեմիա

Հայաստանի Հանրապետություն
Ք. Երևան, Փիրումյանների 9
Հեռ. (+37460) 46 00 87

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

Հայաստանի Հանրապետություն
Ք. Երևան, Նալբանդյան 130
Հեռ. (+37410) 54 69 14

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Երևան «*15*» *09* *2020թ.*

«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս Ռեկտոր Սերգեյ Առաքելյանի՝ մի կողմից, և Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը (այսուհետ՝ Ոստիկանություն), ի դեմս Ոստիկանության պետ Վահե Ղազարյանի՝ մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), հաստատելով երկկողմանի փոխհարաբերություններ ձևավորելու, Կողմերի միջև համագործակցությունն ամրապնդելու և զարգացնելու ձգտումը, ելնելով շարունակական համագործակցության համար հիմքեր ստեղծելու և գործունեությունը զարգացնելու փոխադարձ շահերից՝ կնքեցին սույն Փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր):

I. Հուշագրի նպատակը

1. Հուշագրի նպատակներն են՝

ա) Ակադեմիայի և Ոստիկանության միջև կառուցողական և շարունակական համագործակցության ձևավորումը,

բ) փորձի փոխանակումը,

գ) ուսումնական, գիտական և գործնական ոլորտներում գործունեության փոխադարձ իրականացումը,

դ) փոխադարձ ճանաչողական այցերի կազմակերպումը,

ե) Կողմերի ընդհանուր շահերի ներկայացումը և պաշտպանությունը,

զ) Կողմերի գործունեությունից բխող այլ ուղղություններով համագործակցության ընդլայնումը:

II. Համագործակցության առարկան

2. Կողմերը համաձայն են՝

ա) ընդհանուր մասնագիտական հետաքրքրություն ներկայացնող թեմաներով համատեղ մշակել ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ ծրագրեր և դրանց իրականացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր,

բ) համատեղ մշակված ուսումնական և մեթոդական նյութերն ուղղել Ոստիկանության ծառայողների և Ակադեմիայի ունկնդիրների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական զարգացմանն ու կատարելագործմանը,

գ) Ոստիկանության ծառայողներին՝ ներգրավել Ակադեմիայի դասավանդման, ուսումնառության և վերապատրաստման գործընթացին.

դ) փոխանակել գիտական նյութեր, գրականություն, կիսվել կողմերի հետաքրքրությունների շրջանակը ընդգրկող պրակտիկ փորձով,

ե) կազմակերպել համատեղ գիտական միջոցառումներ՝ քննարկումներ (կլոր սեղաններ), համագումարներ, գիտաժողովներ, սեմինարներ, փորձի փոխանակմանն ուղղված այլ միջոցառումներ,

զ) համատեղ իրականացնել հրատարակչական գործունեություն, փոխադարձ աջակցություն ցուցաբերել պարբերականների հրատարակման գործում,

է) համատեղ իրականացնել միջոցառումներ Կողմերի ձեռքբերումների, գործունեության արդյունքների լուսաբանման նպատակով,

ը) ստեղծել Կողմերի միջև շարունակական համագործակցության ապահովման անհրաժեշտ նախադրյալներ, նախանշել համագործակցության զարգացման ուղիները և հետամուտ լինել դրանց իրականացմանը:

III. Եզրափակիչ և անցումային դրույթներ

3. Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3.1. Կողմերը կարող են Հուշագրում փոփոխություններ կատարել փոխադարձ համաձայնությամբ:

3.2. Փոփոխությունները ձևակերպվում են առանձին արձանագրությամբ, որն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կազմում է Հուշագրի անբաժանելի մասը:

3.3. Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ: Հուշագրի գործողությունը դադարեցնել ցանկացող կողմը մյուս կողմին այդ մասին գրավոր տեղեկացնում է առնվազն երկու ամիս առաջ: Այդ դեպքում Կողմերը պարտավորվում են ավարտին հասցնել մինչև Հուշագրի դադարեցումը չավարտված ծրագրերը:

3.4. Հուշագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից:

Ստորագրված է ք. Երևանում 2020 թվականի սեպտեմբերի 15-ին երկու օրինակից՝ հայերենով:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՍԵՐԳԵՅ ԱՌԱՔԵԼՅԱՆ	**ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ**